

Տէլի-Մալազ անուն եւ հարեղայ մի: Եւ այլ բազում վանորայք տեսաք, զօրաւոր եւ սքանչելադործ, վիմափոր եւ սալարակապ: 170

Եւ դարձեալ յարեւելք՝ տեսաք մեծ եւ հին եարոյք վիմէ, գեանափոր ի Ղայսարի. եւ ասին թէ Պաթըլ-ղաղի կոչեն, ահարկու մաղարայք եւ վիհք ունէք. զոր ասին թէ առաջն աստ էր քաղաքն, զոր Կեսար թագաւորն շի- 175 նեց: Եւ կացաք անդ ամիս մի վասն տեսոյ սուրբ վանօրէից եւ այլ ուխտատեղաց:

Եւ ի Կեսարու ելեալ ԵԱՒՆՁԿԾՆ հասաք. եւ այնպէս բարձր էր որ երբ ի վայր հայէիք՝ թղըլ-Երմախն փոքր եւ բարակ կ'երեւէր. եւ 180 էր սա վանատիկու Բալթայի կարմնճին նման. եւ ի դլուխ կամուրջին ջերմուկ աղնիւ եւ քաղցրաղլուխ, զի որչափ կամիս՝ բմպէ, չա՛հ ունի:

Եւ հինգ օրն հասաք յԱՆԿՈՒՐԻԱ: Եւ ի 185 ճանապարհին միւսանդամ անցաք ի ՉէՇՆԻ-ԿիՐ զթղըլ-Երմախն. բայց հայու գեղ այլ չտեսաք, այլ սաֆի թուրքման, զոր ջուկ ջուկ հանդիպէին մեզ հօտ հօտ ոչխարօք որ արածէին, որպէս յԱրապիստան ուղտք. եւ օր չէր 190 լինար, որ ժՌ, ԻՌ ոչխար չտեսնէաք, մեծամեծ դմակօք որ քարչ տանէին զկնի իւրեանց: Եւ թուրքմնին եւս չրջէին կանամբք եւ գաւակօք Եայլանին. բայց կանայք նոցա յոյժ գեղեցիկ եւ փափուկք են, կարմիրերես: 195